

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի կիրառման նպատակով մշակված առաջարկությունների վերաբերյալ ստացված կարծիքների մասին

Համապատասխան մարմնի անվանումը և դիտողությունների ու առաջարկությունների բովանդակությունը	Դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքները
<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Գրություն 21.01. 2014թ. N ԱԱ/ԹԱ-2-1/241-14</p> <p>Քննարկելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի կիրառման վերաբերյալ ՀՀ համայնքներին մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով Ձեր կողմից մշակված առաջարկությունները հայտնում ենք հետևյալը.</p> <p>ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած և ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովելու համար համայնքային ծառայողների վարձատրությունն իրականացնել քաղաքացիական ծառայողների վարձատրության նորմեր պարունակող իրավական ակտերին համապատասխան:</p> <p>Այս առումով համայնքային ծառայողին իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում 5 տոկոսի չափով հավելավճարի տրամադրումը համահունչ է ՀՀ օրենսդրությամբ քաղաքացիական ծառայողների համար նախատեսված վարձատրման սկզբունքին:</p> <p>Ստաժի հավելավճարը քաղաքացիական ծառայողի համար ամբողջացված է պաշտոնային դրույթաչափի հաշվարկման գործակիցներում և այդ գործակիցների աճի միջոցով պաշտոնային դրույթաչափի բարձրացումը ավելի բարձր տոկոս է կազմում, քան Ձեր կողմից ներկայացված նախագծում: Այս առումով առաջարկում ենք երկարամյա ծառայության համար հավելավճարները նույնպես համապատասխանեցնել քաղաքացիական ծառայողների համար օրենսդրությամբ նախատեսված չափերին:</p>	<p>Օրենքի հիշյալ դրույթը չի կրում պարտադիր բնույթ, քանի որ երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար հավելավճար սահմանելու կամ չսահմանելու հարցը որոշելու լիազորությունը վերապահված է համայնքի ավագանուն: Այդպիսի հավելավճար սահմանելու համար անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել համայնքի բյուջեի հնարավորությունները: Հավելավճար սահմանվելու դեպքում համայնքի ավագանին կորոշի նաև հավելավճարի չափը և կիրառման կարգը: Մշակված և կարծիքի ներկայացված մեթոդական առաջարկությամբ երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար հավելավճարի կիրառման մասով նկարագրված մոդելը ներկայացվել է որպես «օրինակ», ինչը ենթադրում է, որ համայնքի ավագանու որոշմամբ կարող է կիրառվել ինչպես ներկայացված, այնպես էլ դրանից տարբերվող այլ մոդել:</p>